հոն կսորվին հայերէն, տաճկերէն, ֆրանսերէն, անգղիերէն, գերմաներէն, սլավերէն, եբրայերէն, թուաբանութիւն, տրամաբանութիւն, պատմութիւն, աշխարհագրութիւն, կրօնագիտութիւն, գծագրութիւն, երաժշտութիւն, բնագիտութիւն, քիմիաբանութիւն, փիլիսոփայութիւն, մարմնամարզութիւն, հոգեմարզութիւն. հոս ընթերցանութիւնը իրենց մօրն արգանդին մէջ կ'ուսանին։ Թաղեցին իւր վարժարաններուն այս հրաշալի յառաջադիմութիւնն պարտաւոր է Ուսումնական Խորհրդոյն, որ բնաւ հոգ չըներ նոյն - իսկ եթէ աչերովն ալ տեսնէ, որ մսավաճառ մը վարժարանի տնօրէնութիւն կամ հոգաբարձութիւն կ'ընէ։

Ժողովուրդը մեծ մասամբ տգէտ է, եւ տգիտութիւնն պաշտպանութիւն գտնելով՝ օր ըստ օրէ յառաջ կ'երթայ։ Եթէ այս վարժարանին մէջ գիտութեան տեղ տգիտութեան դասեր աւանդուէին՝ առաջին կարգի վարժապետանոց մը կ'ըլլար տգիտութեան։

Իրենց վիճաբանութեան եղանակին վրայ թեթեւ գաղափար մը տալու համար՝ կիրատարակենք հոս վիճաբանութիւն մը, որ երկու հոգւոյ մէջ տեղի ունեցած է.

–Բարեկա՛մ, այս տեսուչն մեր զաւակներուն ապագայն կսպաննէ։

–Ո՛չ, այս տեսուչն մեր զաւակներուն ապագայն կշինէ. երէկ *լալընձի* Ահմէտ աղան վարժարաններու այցելութիւն մը ընելով՝ շատ գոհացուցիչ գտեր է զանոնք։

–Բայց երէկ *պօզաճի* Տիմիթրօն կպնդէր, թէ այդ մարդն այդ պաշտօնին մարդ չէ։

–Սխալ է, *պօզաճին* կիրք ունի մեր տեսուչին դէմ, որ իրիկուններ *պօզա* չխմեր։

–Խորհուրդ մը ընենք եւ սա տեսուչը փոխենք. մեղք է մեր զաւակներուն։

–Ատանկ բան չըլլար, դուն քու նստած խանութիդ վարձքը չես կրնար վճարել եւ կելնես ազգային գործերուն մէջ կմտնես։

–Ես քեզի պէս ուրիշին իրաւունքը չեմ ուտեր, դուն ինձի աղէկ նայէ՛։

–Բերանդ ժողվէ՛, հիմա աթոռը գլխուդ կիջեցնեմ, հա՛ անպիտա՛ն։

–Դուն ալ ասկէ վերջը եկո՛ւր տէ, մեր տունէն կնկանդ համար *շապխա* առ։

–Անցեալ շաբթու չէ՞ր որ երկար *բանթալօնս* առիր եւ Քարակէօմրիւկ ուխտի գացիր։